№ 143 Հոկտեմբերի 5 Շաբաթ 1883 Հոկտեմբերի 5 Շաբաթ № 143

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Հոկտեմբերի 1-ին վախճանվեցաւ Թիֆլիսում Նորին Կայսերական Մեծութեան Պալատի Սենեկապետ, Դէյստվիտելնի Ստատսկի Սովէտնիկ իշխան ԵԱԶՕՆ Դմիտրեան ԹՈՒՄԱՆՕՎ։ Հանգուցեալի ազգականները խորին ցաւով յայտնում են նրա բարեկամներին և ծանօթներին, որ Հոկտեմբերի 2-ից սկսած, ամեն օր, ժամը 6-ին երեկոյեան, հանգուցեալի բնակարանում կատարվելու է այդ։

ԴՕԿՏՕՐ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԻ

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Սերգիևսկի փողոց, Նիկ. Քրիդոնովի տանը, № 17.

4—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծեր»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք «Տաճնամեակ Սահականուշեան օրիորդաց հոգևոր ուսումնարանի հայոց Ալէքսանդրապօլու» վերնագրով գրքույկը։ Այդ գրքույկը ուսումնարանի գոյութեան տասնամեայ հաշիւ է, որ հրատարակել է նոյն իսկ ուսումնարանի վարչութիւնը։ Գրքույկը շատ մաքուր և գեղեցիկ կերպով տպված է Թիֆլիսում, Մովսէս Վարդանեանի և ընկ. տպարանում, ներկայ 1883 թվին։

—

Մեզ գրում են Ղազախի գաւառից հետեւեալը։ «Ամբողջ Ղազախի ազգաբնակութիւնը թէ հայ և թէ թուրք պատրաստում են մի աղերսագիր ներկայացնել իշխան Դոնդուկով-Կորսակովին, հէնց որ նա անցնելիս կը լինի դէպի Երևան։ Աղերսագիրը՝ աւագակների ձեռքով խաղաղ ազգաբնակութեանը հասցրած վնասների մասին է։ Զը նայելով որ բոլոր աւագակները այդ գաւառում թուրքեր են, բայց այնու ամենայնիւ թուրք ազգաբնակութեան խաղաղ և աշխատասէր մասը միացել է հայ ազգաբնակութեանը և նրա հետ միասին ներկայացնելու է աղերսագիրը կառավարչապետ իշխանին։»։

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Կարդալով Մեղուի 93-որդ համարի մանր լուրերում իբր թէ Հալաբարի Հռիփսիմեան օրիորդական ուսումնարանը տագնապի մէջ է և չէ աջողվում այդ դպրոցը պահպանելու, պարտաւոր ենք համարում հաղորդել մեր մամուլին, որ, ընդհակառակը, Հռիփսիմեան ուսումնարանի կանոնաւոր ուսումը արդէն շարունակվում է, նոր հրաւիրված ուսուցչական խումբն էլ եռանդով գործում է, հոգաբարձութիւնն էլ անխոնջ աշխատում է։ Կաշխատենք մի այլ անգամ «Մշակի» միջոցով աւելի մանրամասն տեղեկութիւն տալ հասարակութեանը Հռիփսիմեան դպրոցի մասին։»

—

Թիֆլիսի վրաց թատրոնական խումբը արդէն յայտարարեց որ այս տարի տալու է իր ներկայացումները Արծրունու թատրոնում, ինչպէս և անցեալ տարին։

—

Հոկտեմբերի 1-ին վախճանվեցաւ Թիֆլիսում քաղաքիս նախկին քաղաքագլուխ, Նորին Մեծութեան Պալատի սենեկապետ, իշխան Եազօն Դմիտրեան Թումանեան։

—

Ս.-Պետերբուրգում լուր է տարածված, ասում են մայրաքաղաքի լրագիրները, որ արիստոկրատական դասակարգի երեք ներկայացուցիչներ, որոնք կրում են բարձր տիտղոսներ, դիտաւորութիւն ունեն ձեռնարկել մի մեծ քաղաքական-գրականական լրագրի հրատարակութեան։ Պարոնները դիտաւորութիւն ունեն իրանց նպատակին հասնելու համար ձեռք բերել «Գոլոս» լրագիրը։

—

Տիկին Կովալեվսկի, Նորերումս վախճանված պրոֆէսսոր Կովալեվսկու կինը, իր ուսումն աւարտելով գերմանական Գէտինգէն քաղաքի համալսարանում, որտեղ նա ստացաւ մաթէմատիկայի դոկտորի աստիճանը, դիտաւորութիւն ունէր մաթէմատիկայի մագիստրոսի հարցաքննութիւն տալ Մոսկվայի համալսարանում, բայց այդ նրան չաջողվեցաւ։ Այժմ տիկին Կովալեվսկի հրաւիրված է երեք տարով պրիվատ-դոցէնտի պաշտօնով Ստոկհոլմի համալսարանը, որտեղ նա կարդալու է դասախօսութիւններ մաթէմատիկայից, գերմաներէն լեզուով։

«Մեղու Հայաստանի» լրագիրը շարունակում է սաստիկ ջերմ ունեցողի պէս դէլ տալ։

—

«Արձագանք» շաբաթաթերթը տպել է հետեւեալ նկատողութիւնը Թիֆլիսի Գայանեան օրիորդաց ուսումնարանի այս օրերս տեղի ունեցած տասն և չորրորդ տարեդարձի մասին։ Դպրոցի վարչութեան ներկայացրած հաշուից երևում է, որ անցեալ տարի ուսումնարանը ունեցել է 226 աշակերտուհի, որոնցից 173 իրանց ծախսով են սովորել։ Ուսումը աւարտել են 9 օրիորդ։ Տարվայ ընթացքում եկամուտը եղել է 14,058 բուբլ 54 կ., իսկ ծախսը 13,897 բ. 71 կոպ.։ Ուսումնարանի դրամագլուխը հասնում է այժմ 31,825 բուբլ գումարի։

—

«Тифл. Объявл.» լրագրի № 232 մէջ տպվեցաւ պ. Խ. Լօմիզէի յօդուածը որ մի քանի ճիշդ նկատողութիւններ է անում պ. Արթուր Լէյստի յօդուածի առիթով, որ տպվեցաւ Նորերումս գերմանական «Magazin für die Literatur» շաբաթաթերթում։

—

«Արձագանքի» մէջ կարդում ենք որ այս շաբաթ հասաւ Թիֆլիս մի ֆրանսիացի զինուորական բժշկապետ պ. Դը-Ֆուրնօ, որ գիտնական առաքելութեան պաշտօնով ուղարկված է Ֆրանսիայի պատերազմական մինիստրութիւնից ճանապարհորդելու ամբողջ Թիւրքաց Հայաստանում։ Այժմ վերադառնալով այնտեղից, բժշկապետը մեր քաղաքով ուղևորվում է Պարսկաստան նոյն նպատակով։ Շաբաթաթերթը կարծում է, որ պարոնը ժամանակով կը հրատարակի իր ճանապարհորդական դիտողութիւնները։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՒ «ԿԱՅԾԵՐԸ»

—

Հիմա անցնենք պ. Հայկունու աւելի նշանաւոր նկատողութիւններին, որոնց մէջ պարոնը նոյնպէս «Կայծերի» գործող անձինքների կարծիքները վերաբերում է հեղինակին։

«Կայծերի» մէջ (եր. 461—463) հերոսներից մէկը, Ասլանը, հետեւեալ դատողութիւններն է անում Հին-Հայաստանի եկեղեցականների մասին։

«Բայց եղել են ժամանակներ և այն ժամանակները շատ հին են, երբ մեր եկեղեցականները այնպէս չէին, որպէս այժմ։ Նրանք դրանց նման անբնական կեանք չէին վարում. նրանք գերդաստանի հայրեր էին և ընտանիքների մէջ էին բնակվում։ Այս պատճառով, նրանք գիտէին, թէ ինչ է կեանքը, ինչ է աշխարհը և ինչպէս պէտք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտաւոր լինի։ Գերդաստանի հայր լինելով, մի և նոյն ժամանակ նրանք ժողովրդի հայրն էին. ծնողական սիրոյ զգացմունքը առաջ էր բերել նրանց մէջ և խիստ ջերմ սէր դէպի ամբոխը, և բոլոր սրտով նուիրել էին իրանց անձը ժողովրդի բարօրութեանը։ Իսկ այժմ չէ կարելի գտնել մի մարդ, որ այնպէս վայրենի, անզգայ և անտարբեր լինէր դէպի հասարակաց բարին, ինչպէս մեր կուսակրօն եկեղեցականը»։

«Վանքն այն ժամանակ, այժմեան պէս, աշխարհային գործերից փախած, և իրան երևակայական հոգևոր ծառայութեան նուիրած, ծոյլերի բնակարան չէր։

—Վանքն այն ժամանակ հոգևոր և մարմնաւոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանութիւնը պարապած էր մանուկների կրթութիւնով, գրքերի թարգմանութիւնով, ինքնուրոյն հեղինակութիւններով և դիտութիւնն ու լոյսը ժողովրդի մէջ տարածելով։

«Եկեղեցականութիւնը այն ժամանակ, որպէս կրօնի, եկեղեցու և կրթութեան, նոյնպէս և հայրենիքի ու պետութեան հզօր պաշտպանն էր։ Եթէ լինում էին մեր թագաւորների ու նախարարների մէջ խռովութիւններ, եկեղեցականն էր նրանց մէջ հաշտեցուցիչ տարրը։ Եթէ լինում էին թշնամու հետ պատերազմներ, եկեղեցականն էր ոգևորում ժողովրդին կռուելու, քաջութեամբ կռուելու և պաշտպանելու իր հայրենիքը։ Եթէ որ և իցէ թագաւորի հետ պէտք էր խաղաղութեան դաշն կապել, եկեղեցականն էր դեսպանախօսութեան գնում։ Եթէ հայրենիքին վտանգ էր սպառնում և ուրիշ թագաւորներից պէտք էր օգնութիւն խնդրել, եկեղեցականն էր միջնորդ դառնում։—Մի խօսքով, բարձր հոգևոր կառավարութիւնը խիստ սերտ կերպով կապված էր թագաւորի իշխանութեան հետ, և երկու ներդաշնակ ուժեր, միացած մի ամբողջութեան մէջ, լծորդաբար առաջ էին տանում պետութեան կառավարութիւնը։

„Այս ամենը, ինչ որ գործում էր եկեղեցականութիւնը, բոլորովին ընդդէմ էր նրա կրօնական բնաւորութեանը։ Բայց մեր եկեղեցականութիւնը այն ժամանակ մի նշանաւոր բացառութիւն էր կազմում ամբողջ քրիստոնէական աշխարհում,—նա կատարեալ ժողովրդական էր, նա միացնում էր իր մէջ հոգևոր և նիւթական կեանքը—իրական աշխարհը և երկինքը։ Իսկ այժմ»...

Այժմ, ցոյց է տալիս Ասլանը, որ այժմեան եկեղեցականները չեղվել են իրանց նախնական դրութիւնից։

Բայց պ. Հայկունին, նախնի եկեղեցականների վերև յիշած բոլոր արժանաւորութիւնները, նրանց բոլոր լաւ առանձնայատկութիւնները մի կողմ դնելով, „Մեղուի“ և „Մշակի“ կրօնական հարցն է ներս շպրտում „Կայծերի“ քննութեան մէջ։ Նա աշխատում է ցոյց տալ, իբր թէ Բաֆֆին (դարձեալ Բաֆֆին) ասած լինի, թէ նախնի եկեղեցականութեան առաւելութիւնը միմիայն նրանումն էր, որ նրանք ամուսնացած էին, իսկ այժմեանները կուսակրօն են։ Եւ „Բոքլին“ իրան օգնութեան կանչելով, աշխատում է սխալ համարել այդ կարծիքը, և խորհուրդ է տալիս Բաֆֆին գնալ պատմութիւնը նորից ուսումնասիրել և առանց պատմութիւն սովորելու, պատմական քննութիւնների մէջ չը մտնել։

Նա հետեւեալ խօսքերով պահանջում է „Կայծերի“ հեղինակից, որ ցոյց տայ, թէ „Երբ, որ դարում և որ հոգևորականները իրանց կաթողիկոսական և եպիսկոպոսական աթոռների և բարձերի վրա բաղմած ժամանակ իրանց հետ աթոռակից և բարձակից ունէին իրանց սիրասուն կէսերին—կնիկներին“։

Թէև մի վէպի քննութեան նպատակից բոլորովին դուրս է այս տեսակ եկեղեցական վիճաբանութիւնների մէջ մտնել, բայց որովհետև պ. Հայկունին պահանջում է, պէտք է ցոյց տալ, որ սխալ սուրբ Գրիգոր Լուսաւորչից մինչև նրա տոհմի վերջին ժառանգը, Սահակ պարթևը, հայոց կաթողիկոսների մի ամբողջ շարք ամուսնացած էին, կին և որդիք ունէին, մինը միւսից յետոյ ժառանգում էին հայրապետական աթոռը, որդին յաջորդում էր հօրը։

Բայց որովհետև պ. Հայկունին պատմական մի մեծ սխալ է համարում այդ, նրա պարտաւորութիւնն է՝ այդ երկուսից մէկը ապացուցանել. կամ ցոյց տալ, որ վերև յիշված կաթողիկոսական ամբողջ սերունդը ամենևին ամուսնացած չէ եղել, և կամ, եթէ ամուսնացած էին, նրանք հայրապետական աթոռը նստելուց յետոյ օրինապէս բաժանվեցան իրանց ամուսիններից։ Դրանով պ. Հայկունին մի նոր գիւտ արած կը լինէր մեր եկեղեցական օրէնքների մէջ, որ ապահարզանը գոյութիւն է ունեցել մեր եկեղեցու սկզբնական դարերում, որովհետև կաթողիկոսները և՛ ամուսնանում էին, և՛ բաժանվում էին իրանց ամուսիններից։ Բայց թէ „Բոքլը“ այսպէս է ասել, կամ այնպէս է ասել,—այդ հարցի մէջ Բոքլին դիմելու հարկ չը կայ, մանաւանդ, որ Բոքլից շատ խէր չի տեսնի պ. Հայկունին,—հարկաւոր է ուղիղ դիմել հայոց պատմութեանը։

Պ. Հայկունին իր կրիտիկայի մէջ մի խորամանկ ձև է բանեցնում հակառակորդի վրա մեղադրանքներ բարձելու համար։ Այդ ձևը կարող է շատ ընթերցողներին մոլորեցնել, եթէ ուշադրութեամբ չը կարդան նրան։ Նա ուղղակի չէ դիմում հարցին, այլ ամեն ինչ սկսում է բարձր, փքված և սոֆիզմներով լի յառաջաբաններով, բայց երբ հասնում է բուն իրողութեանը, փաստերին, այստեղ լռութեամբ անցնում է, իսկ ընթերցողը մնում է յառաջաբանի տպաւորութեան ներքոյ, ինքն իրան խաբելով, թէ մի ճշմարիտ բան կարդաց։

Իմ յօդուածի սկզբներում ես ցոյց տուի, որ պ. Հայկունին աշխատում էր հաստատել այն կարծիքը, թէ «Կայծերը» պատմական վէպ չէ, թէ նրա մէջ պատմական ոչինչ չը կայ։ Ցանկարծ այդ բոլորը մոռանալով, նա սկսում է երկար երեմեականներ կարդալ, որ Բաֆֆին առանց պատմութիւնը ուսումնասիրած լինելու, յանդգնում է պատմական վէպեր գրել։ Ես կը բերեմ նրա սեպհական խօսքերը։

«Պատմութիւնը, ես առաւել նրա ժամանակագրական մասեր գրելը, պ. Բաֆֆի, «Թենթեր» ու «Կայծեր» գրելու նման հեշտ բան չէ, ինչպէս դուք կարծել էք։ Պատմական—վիպասանը, իրան համար մի բարոյական, սեպուհ պարտաւորութիւն պիտի համարէ, թոյլ չը տալ իրան թեթև գրչին մի կէտ, մի «նշանախեց» անգամ թղթի վրա չը դնել, առանց մի քանի տեսակ անհրաժեշտ և իրական փաստերի, առանց ոչ թէ մոլեռանդ, այլ ամենաբարեխիղճ և բազմակողմանի հետազօտութիւնների և ամենամանրամասն խուզարկութիւնների։ Դրա համար անհրաժեշտ և անպայման հարկաւոր է, բարեկամս, որ պատմական վիպասանը, կամ պատմութեան այս և այն մասը շօշափողը, լինի նախ՝ զերծ և ազատ որ և է տեսակ մոլեռանդութիւնից և երկրորդ՝ ունենայ գիտութիւն (մանաւանդ մի քանի գիտութիւնների) եթէ ոչ մասնագիտական, գէթ հաւատարիմ և առատ պաշար։ Խոստովանեցէք, պ. Բաֆֆի, որ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Daily News» լրագրի թղթակիցը հաղորդում է Վարնայից, որ Թիւրքաց Հայաստանի բարեկարգութեան ծրագիրը, որ կազմել էր Բ. Դուռը, ներկայացվեցաւ Սուլթանին ի հաստատութիւն: Սուլթանը վերադարձրեց ծրագիրը ուղղելու համար, որովհետև այդ ծրագիրը իբրև թէ չափազանց մեծ արտօնութիւններ է տալիս հայերին:

—Русскій Курьеръ" լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը: «Մի քանի օրից յետոյ լօրդ Դիֆբրին Կ. Պոլսում կը լինի: Անգլիական դեսպանի յանկարծակի գալուստը առիթ է տալիս զանազան ենթադրութիւններին: Ամենից հաւանական կարծիքն այն է, որ լօրդ Դիֆբրին կը գայ այս տեղ առանձին առաքելութեամբ (միսսիայով): Սակայն երկու անգլիական լրագիրներ, որոնք անգլիական դեսպանատան հետ սերտ յարաբերութիւն ունեն և համարեա միշտ արժանահաւատ տեղեկութիւններ են ստանում, պընդում են, որ անգլիական ներկայացուցիչը կը գայ այստեղ կրկին դեսպանի պաշտօնը ստանձնելու համար: Այնու ամենայնիւ, ինչ էլ որ խօսեն, այդ վերադարձը ինքն ըստ ինքեան նշանակութիւն ունի: Լօնդօնից ստացված մասնաւոր նամակները հաստատում են տալիս, որ անգլիական պետական մարդկանց մեծամասնութեան կարծիքով Թիւրքիայի և Անգլիայի բարեկամանալը բաւական հաւանական է: Նրանց կարծիքով Թիւրքիան, գտնվելով Գերմանիայի և Ռուսաստանի մէջ, ստիպված է Անգլիայի օգնութեանը դիմել, իսկ այդ վերջինը սաստիկ պահանջող չի լինի: Այժմ արդէն եթէ ոչ հաստատ, սակայն հաւանական է, որ լօրդ Դիֆբրին վերադառնալով այստեղ, կը հետևի աւելի պակաս ամբարտաւանութիւն ունեցող քաղաքականութեանը քան թէ վերջին անգամ Կ. Պոլսով անցնելու ժամանակը: Հայկական վերանորոգութիւնների վիճակը կախված կը լինի նրանից, թէ Թիւրքիան որքան զիջումներ կանի Անգլիային ուրիշ հարցերում: Այդ ժամանակամիջոցում մի քանի մինիստրներ մասնաժողով կազմեցին վերանորոգութիւնների նախագիծ պատրաստելու համար: Որովհետև հայոց պատրիարքը չէ համաձայնվում որ ե է զիջումներ անել վերանորոգութիւնների վերաբերութեամբ և պայման է դնում, որ մինչև այդ ռէֆորմները չիրագործվեն, ինքն վերջնականապէս չի վերադառնայ պատրիարքական գահի վրա, այդ պատճառով սուլթանը հրամայեց մինիստրներին վերանորոգութիւնների նախագիծ կազմել: Այդպիսով սուլթանը կամենում է առաջն առնել ամեն առաջադրութիւններ, որ կարող է անել Անգլիան, որովհետև Կ. Պոլսով անցնելու ժամանակ լօրդ Դիֆբրին յայտնեց սուլթանին, որ ինքն վերանորոգութիւնների լիակատար նախագիծ կը ներկայացնի Թիւրքաց Հայաստանի համար„:

—Սպանիական թագաւորի փարիզ գնալու մասին ֆրանսիական «Temps» լրագիրը ասում է: «Սպանիական թագաւորը արդէն Բօրդօ ուղևորվեցաւ: Նա ընդունեց հանրապետութեան նախագահին, որ այցելեց նրան ցաւակցութիւն յայտնելու համար պատահած ցոյցի առիթով: Նրանից յետոյ Ալֆոնս թագաւորը ներկայ էր ճաշկերոյթին Ելիսեան պալատի մէջ, որ տրվեցաւ ի պատիւ նրա, ուր և ներկայ էին ֆրանսիական կառավարութեան անդամները և սպանիական քաղաքագէտները: Այդ երկու անցքերը անկասկած վերջ կը դնեն տհաճ անցքին, որի նշանակութիւնը այդքան չափազանցացրին օտար լրագիրները և որը նրանք դատապարտեցին մեծ խրատութեամբ: Անգլիական գլխաւոր լրագիրները սաստիկ դատապարտում են այդ անախորժ անցքը: Գերմանական լրագիրները օգուտ քաղեցին դրանից և ազգային—ազատամիտների «Nation. Zeitg.» լրագիրը ասում է, որ սպանիական թագաւորը չափազանց գոհ մնաց իր ընդունելութիւնից Գերմանիայի մէջ: «Եթէ Սպանիայի միանալը աւստրո-գերմանական դաշնակցութեանը դեռևս կատարված իրողութիւն չէ, ասում է Բերլինի լրագիրը, այնու ամենայնիւ երկու թագաւորների հետ բարեկամական տեսութիւնը միջոց է տալիս Ալֆոնս թագաւորին իմանալ Եւրոպայի կենտրոնական երկու պետութիւնների բարեկամութեան գինը»: Սպանիական թագաւորը, շարունակում է «Temps» լրագիրը, չտապեց ուղևորվել իր մինիստրների խորհուրդով: Սպանիական մամուլը այս ունի, որ կառավարութիւնը կը դիմէ ֆրանսիային մի շրջաբերականով այդ դէպքի առիթով: Բայց այդ առաջարկութիւնը հաղորդելու ժամանակ դեռ յայտնի չէր, որ Գրէվի այցելեց Ալֆոնս թագաւորին և թէ վերջինը ինչպէս ընդունեց նախագահի հաղորդութիւնները: Անկասկած Մադրիդի մամուլը գործի մանրամասները իմանալուց յետոյ յետ կառնի իր նախկին կարծիքները և սպանիական թագաւորի խօսքերը գրաւական կը լինեն, որ մի քանի անձանց անվայել վարմունքը չի վնասի երկու երկիրների բարեկամական կապերին»:

— Ընդարական ազգային ժողովի վերջին նիստին խօրհատ պատգամաւորները չը մասնակցեցին և ասում են, որ նրանք չեն մասնակցի նիստերին մինչև մինիստրների խորհուրդը չի վճռի յայտարարների հարցը:

— Պրոֆէսօր Լիստէր, որ ներկայումս գտնվում է Պեշտի մէջ, այնտեղի համալսարանի բժշկական մասի ուսանողների ցոյցերի առարկայ է դարձել: Համալսարանի պրոֆէսօրները ի պատիւ նրա ճաշ տուին, իսկ ուսանողները ճանապարհ դրին նրան ջահերով: «Անգլիական թագուհու» հիւրանոցի մէջ տուած ճաշկերոյթին ներկայ էին բոլոր պրոֆէսօրները: Պատասխանելով իր կենացի առիթով արտասանած ճառին, պրոֆէսօր Լիստէր ասեց, որ նա շատ ուրախ է, որ Պեշտի համալսարանը այդքան ծաղկած դրութեան մէջ է: Ճաշից յետոյ մի քանի հարիւր ուսանողներ հաւաքվեցան հիւրանոցի առաջ, մի պատգամաւորութիւն ուղարկեցին Լիստէրի մօտ և նա դուրս եկաւ իր կնոջ հետ: Ուսանողներից մէկը ճառ ասաց ունգարական լեզուով, իսկ միւսը անգլիական լեզուով: Նրանք իրանց անուանեցին իրանց ընկերների ներկայացուցիչներ և նրանց զգացմունքները արտայայտողներ: Նախրելով իրանց բժշկականութեանը, նրանք ամեն օր հազար անգամ լսում են պրոֆէսօր Լիստէրի անունը և այն, որ նրա գործունէութիւնը բարերարութիւն է մարդկութեան համար: Ճառերը ուրայով վերջացան: Լիստէր պատասխանեց գերմանական լեզուով և չնորհակալութիւն յայտնեց ցոյցերի համար: Նա աւելացրեց, որ այդ համակրութիւնը և ոգևորութիւնը վերաբերում է ոչ թէ իրան, այլ այն ազնիւ գիտութեանը, որին նա ծառայում է:

— Մադրիդից լրագիրներին հաղորդում են, որ Սպանիայի մէջ ապրող ֆրանսիացիները դիմաւորեցին Ալֆոնս թագաւորին երկաթուղու կայարանի վրա և որ այժմ այլ ևս թշնամութիւն չէ նկատվում ֆրանսիացիների և սպանացիների մէջ:

— Բ. Դրան պաշտօնական «Turquie» լրագիրը, բանակաւելով «Journal de St. Petersbourg» լրագրի հետ, նկատում է հետևեալը. «Մենք չենք բամանում «Journal de St. Petersbourg» լրագրի երկիւղները: Ամենից առաջ իշխան Ալէքսանդր բօլգարական իշխան է ու մի կառավարութեան առաջնորդ, որ գտնվում է սուլթանի բարձր իրաւասութեան տակ: Նա ցանկանում է կառավարել երկիրը ժողովրդի ցանկութեան համեմատ և շատ խելացի է վարվում: Նրա բռնած ընթացքը մանաւանդ նպատակայարմար էր նրանով, որ ռուսաց գեներալները, որոնք իրանց կառավարչութեան ժամանակ կամայականութեամբ էին վարվում, երևի չէին հասկանում իրանց կառավարութեան դիտաւորութիւնները և Բօլգարիայի մէջ ծանր դրութիւն ստեղծեցին: Իշխան Ալէքսանդր միակ ճանապարհը ընտրեց, որ նրան յարմար էր Բօլգարիայի շահերին ծառայելու համար, որոնց մասին դրեթէ ոչ ոք չէր մտածում: Իշխան Ալէքսանդր յենվելով ժողովրդի վրա, կարող է երկիրը բարեկարգել և վերանորոգութիւններ մըտցնել Բօլգարիայի մէջ:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հէյնէի օրագրութիւնները: Փարիզից գրում են «St-Petersburger Zeitung» լրագրին, որ Հէյնէի օրագրութիւնները, որոնց գոյութեան կամ չը լինելու մասին այնպէս շատ վիճում էին գերմանական նշանաւոր բանաստեղծի մահից յետոյ, գտնվեցան: «Փարիզեան Լուրերի» հրատարակիչը տեսել է բանաստեղծի մեծածաւալ ձեռագիրը, որը առաջին տողից մինչև վերջինը գրված է Հէյնէի ձեռքով: Հէյնէի վերջին կամքի համաձայն, այդ օրագրութիւնները պէտք է հրատարակվէին ոչ վաղ, քան նրա կնոջ մահից յետոյ: Այս օրերս նօտարը, որի մօտ օրագրութիւնները պահպանվում էին կնքված ծրարում, յանձնեց այդ գրուածքը հանդուցեալ տիկին Հէյնէի կտակակատարներին: Ասում են, որ այդ վերին աստիճանի հետաքրքիր յիշատակարանները շուտով լոյս կը տեսնեն:

* * *

«Academy» առանձին յօդուածում խօսում է ռուսաց համալսարանների մասին և ի միջի այլոց Վարշավայի համալսարանի մասին: Երևում է, որ ամենահարուստ գրադարանը Վարշավայի համալսարանի գրադարանն է, որի մէջ 362,000 գրքեր կան, ապա դրան հետևում է Դօրպատի

ձեզ պակսում են թէ առաջինը և թէ երկրորդը, զուցէ և երրորդ ու չորրորդ պայմաններ, ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ չը մտանալ այն ասճարին, պատմական վիպասանութեանը, որի սուրբ և մաքուր ասպիճանները կարող էք մի օր ձեր ցեխոտ և հնացած ու մաշված հագուստով յանդգնաբար կեղտոտել ու նսեմացնել» և այլն:

Պ. Հայկունու այդ երկար յառաջաբանը, այդ ամբողջ մեղադրական ճառը կարդալով, ընթերցողը սպասում է, որ նա «Կայծերից» դուրս կը բերէ սխալների մի երկար շարք, և ցոյց կը տայ, որ Բաֆֆին մեղանչել է պատմութեան դէմ: Բայց ինչով է վերջանում պարոնի մեղադրանքը:—Նը-բանով, որ ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան հանդէսի նկարագրութիւնը, (363—379) նրա կարծիքով, ճիշտ չէ: Թէ ճիշտ է, թէ ճիշտ չէ, այդ ուրիշ հարց է,—բայց մինթէ մի որ և իցէ վանքի տօնախմբութեան հանդէսը, որ այսօր կատարվում է մեր աչքի առջև, պատմական իրողութիւն է: Նա կարող է յիշեցնել մեզ պատմութեան այս և այն երևոյթները, նա կարող է պահպանած լինել իր մէջ շատ մնացորդներ հին ժամանակներից, բայց այսու ամենայնիւ կատարվող իրողութիւնը ժամանակակից է: Եւ նրան ուսումնասիրելու կամ նկարագրելու համար, հարկաւոր չէ դիմել պատմութեանը, այլ պէտք է ուղիղ դիմել դեռ չը մեռած կեանքին, որի մէջ այսօր կատարվում է նա:

Պէտք է բաւական յանդգնութիւն ունենալ և այսպէս անամօթաբար վերաբերվել դէպի մի հեղինակ, որ տուել է մեզ այնպիսի գեղեցիկ պատմական աշխատութիւններ, որպէս են «Դաւիթ-բէկը» և «Խամսայի Մելիքութիւնները» *):

Ս. Տիրամօր վանքի մասին մենք երկար պէտք է խօսենք, որովհետև այդ մասը բռնում է պ. Հայկունու կրիտիկայի համարեա կէսը: Բայց այժմ հարկաւոր եմ համարում մի քանի խօսքերով ցոյց տալ, թէ պատմական վիպասանը մինչև որ աստիճան, կամ ինչ չափով պարտաւոր է հետևել պատմութեանը:

Բանաստեղծը ազատ է, նա չի պիտի լինի պատմութեան սարուկը: Եթէ նա ամենայն ճշտութեամբ կը հետևի պատմութեանը, այլ ևս չի լինի նա ստեղծագործող, բայց միայն սրտագրող: Բանաստեղծը, արդարև, կարդում է ժամանակագրութիւններ, ծանօթանում է պատմութեան հետ, ծանօթանում է իր ընտրած ժամանակի հետ, իր ընտրած անձինքների հետ, ստուգում է, համեմատութիւններ է անում,—բայց այդ բոլոր ուսումնասիրութիւնից նա առնում է այն գծերը միայն, ինչ որ պէտք է իր ստեղծագործութեան համար, իսկ գլխաւոր գործողութիւնները իր ֆանտազիայի ծընունդն է լինում: Նա մինչև անգամ շատ դէպքերում իրաւունք ունի ոչնչացնելու պատմութեան փաստական ճշմարտութիւնը, որովհետև նրան պէտք են դաղափարական ճշմարտութիւններ: Հայր Արսէն Բագրատունու Հայկ Դիւցազը ամենևին նման չէ Խորենացու Հայկի հետ, ինչպէս Շիլլերի Դօն—Կարլոսը նման չէ պատմութեան Դօն—Կարլոսին: Նոյն իսկ պատմականների զրչի տակ մի և նոյն պատմական անցքի նկարագրութիւնը, մի և նոյն պատմական անձնաւորութիւնը տարբեր կերպարանք է առանում: Եղիշէի Վարդանը շատ զանազանվում է Ղազար Փարպեցու Վարդանից: Կը նշանակէ, որ պատմականներն ևս իրանց ի դէպն ունեն: Բանաստեղծը վեր է առնում պատմութիւնից չոր ու ցամաք կմախքը միայն, նրան վերաստեղծում է, հոգի և մարմին է տալիս, և մի առանձին պատկերով ներկայացնում է մեզ: Այդ պատկերը թէև պատմութեան նկարագրած պատկերը չէ, բայց մենք տեսնում ենք նրա մէջ պատմութիւնը յարութիւն առած, կենդանացած և իր ամբողջական կերպարանքով մեր առաջ կանգնած: Ահա դրա մէջն է պատմական վիպասանի ճարտարութիւնը:

Պ. Հայկունու վերևում բերած մեղադրական ճառի մէջ աւելի աչքի են զարկում հետևեալ տողերը, որ նա ուղղում է դէպի Բաֆֆին թէ «պատմական վիպասանը պէտք է ունենայ գիտութիւն, մանաւանդ մի քանի գիտութիւններ» եթէ ոչ մասնագիտական, դէթ հաւատարիմ և առատ պաշար»: Այդ տողերի վրա ևս ուշադրութիւն չէի դարձնի, եթէ պ. կրիտիկոսը իր յօդուածի մէջ մի քանի անգամ ևս ակնարկած չը լինէր, թէ Բաֆֆին չէ կարող լաւ վիպասան լինել, որովհետև համալսարանական դիպլոմ չունի: Բայց ես կասեմ, բանաստեղծ լինելու համար դիպլոմ հարկաւոր չէ. բանաստեղծի դիպլոմը տալիս է ինքը բնութիւնը: Գիտութիւնը անհաշտ է բանաստեղծութեան հետ, ճշմարիտ դիտնականը բանաստեղծ լինել կարող չէ: Ահա ինչ է ասում այդ մասին մի երևելի կրիտիկոս.

«Գիտութեան և գեղարուստի մէջ, իրաւ է, կռիւ կայ: Ողնորութեանը պէտք չէ գիտութիւն, նա աւելի ուսեալ է քան թէ գիտութիւնը, նա երբէք չէ սխալվում: Ստեղծագործութեան հիմնական օրէնքը այն է, որ նա նպատակայարմար է լինում առանց կանխակալ նպատակի, որ նա անգիտակցաբար հասնում է գիտակցութեան, հերքում է բոլոր թէօրիաները և սիստեմները, բացի նրանից, որ առաջացած է մարդկային հոգու օրէնքներից, և դարերոր փորձերից, որ զորձ են դրվում գեղարուեստի արդիւնքների վրա: Ուրեմն, ոչ թէ գիտութիւն է ստեղծում գեղարուեստը, այլ ինքը գեղարուեստը ստեղծում է մի առանձին գիտութիւն, այն է՝ գեղեցկի թէօրիան: Ուրեմն գեղարուեստը այն ժամանակ միայն ճշմարիտ է և վսեմ, երբ հաւատարիմ է իրան, և ոչ թէ գիտութեան, իսկ եթէ գիտութեան, բայց հէնց իրա ստեղծած գիտութեան: Գիտութիւնը միայն բարձրացնում է տաղանդը և ոչ թէ ստեղծում է նրան»:

Հիմի դառնանք ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան նկարագրութեանը «Կայծերի» մէջ (363—379), որի մասին պ. Հայկունին այնքան վրդովված է, որ մեղադրում է հեղինակին և պատմութեան ոգիտութեան մէջ, և թշնամութեան մէջ դէպի հայոց եկեղեցին, և ուրիշ շատ յանցանքների մէջ:

«Կայծերի» հերոսներից մէկը, Ֆարհատը, նկարագրելով յիշեալ վանքի տօնախմբութեան հանդէսը իր բոլոր հետաքրքիր սովորութիւններով ու արարողութիւններով, մի և նոյն ժամանակ ներկայացնում է վանքի «խեղճերի» ու «ընկաւորների» սարսափելի պատկերը: «Խեղճերը» ուրվանների (уроды), հաշմանդամների, բորոտների և զանազան տեսակ հիւանդութիւններով այլանդակված թշուառների մի խումբ է, որ պահվում է վանքում սուրբ Աստուածամօրից բժշկութիւն գտնելու նպատակով: Իսկ ընկաւորները մի տեսակ պատգամախօսներ են, որոնք խելագարի նման ցած ընկնելով, փրփրելով, սկսում են զանազան դուշակութիւններ անել ուխտաւորների համար: Թէ առաջինները և թէ երկրորդները հովանաւորվում են աբեղաներից, որովհետև աղդում են ուխտաւորների մէջ սարսափ, սնահաւատութիւն և ջերմեռանդութիւն: Եւ այդ բոլորը աբեղաները նը-պաստաւոր են համարում իրանց շահերի համար:

Ֆարհատը այդ բոլորը նկարագրելով, այն կարծիքն է յայտնում, թէ դրանք հեթանոսական դարերից մնացած սնահաւատութիւններ են: Ահա նրա խօսքերը.

«Ոչ մի նոր վարդապետութիւն բոլորովին չէ կարողանում ջնջել, անհետացնել ժողովրդի պտից այն, որ թողել է անցեալը: Հեթանոսական ծէսերը, արարողութիւնները, պաշտամունքը դարերով արմատացել էին հայի հոգու մէջ, նրանք միացել էին նրա բնաւորութեան հետ: Քրիստոնէութիւնը

---

*) «Դաւիթ-Բէկի» և «Խամսայի Մելիքութիւնների» վրա խօսելով, պ. Հայկունին իր յօդուածի ծանօթութիւնների մէջ, կարծեմ չորս տեղ մի և նոյնը կրկնում է, որ, թէև ինքը չէ կարդացել այդ գրքերը, բայց հաստատ իմանում է, որ նրանց մէջ ևս շատ պատմական սխալներ կան: Այդ պէտք է վերաբերել պ. Կրիտիկոսի առանձին ընդունակութեանը, որ առանց կարդալու ևս կարող է նկատել գրքերի մէջ սխալներ:

Բայց ես չեմ կարող լռել պարոնի տատիսսութեան վրա, թէ նա յիշեալ գրքերը չէ կարդացել: Մի ժամանակ պարոնը Ախալցխայի և Ախալքալաքի գիւղերում մի նոր դրամաճառութեան եղանակ էր հնարել. գիշերները գիւղացիներին հաւաքում էր անասունների ախոռներում և կարդում էր նրանց «Դաւիթ-Բէկը», գիւղացիները գրաւվում էին, յետոյ վճարում էին նրան դարի, ճու, պանիր, հաց և այդ միթերքներով գնում էին «Դաւիթ-Բէկի» հատորները:

Ծան. հեղ.

համալսարանի զրադարանը, ուր 219,000 հատոր գրքեր կան:

* * *

Կոմս Շամբորի մահից յետոյ ֆրանսիական օրինական կուսակցութեան օրգանները կամաց-կամաց սկսում են դադարել: Օրինակ, սեպտեմբերի 19-ին օրինականների «Union» լրագիրը դադարեցրեց իր գոյութիւնը: Նոյն վիճակն է սպառնում «Gazette de France» լրագրին, որը նոյն կուսակցութեան օրգանն է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Պերֆիլեվի գործի մասին կառավարչական սենատի քրէական բաժինը վճռեց՝ ծառայութենից արտաքսել Պերֆիլեվին և վերցնել նրանից 15,000 ր. դատաստանական ծախսեր և տուգանք:

ՄՈՍԿՎԱ, 30 սեպտեմբերի: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ իր որդուց հետ արտաքոյ կարգի գնացքով ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ:

ՎԻԵՆՆԱ, 30 սեպտեմբերի: Աւստրիական կայսրը յունաց թագաւորին 99-դ գունդի տէր նշանակեց:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 30 սեպտեմբերի: Արդարութեան մինիստր Սատաեսկու հրաժարական տուաւ:

ՍՕՖԻԱ, 30 սեպտեմբերի: Ներքին է յայտնված քաղաքական բոլոր յանցանքների համար, որոնք կատարված են մինչև ահմանադրութեան վերականգնելը, և կարգադրութիւն է արված, որ մահմեդական ազգաբնակութեամբ գերակշռող նահանգների մէջ նահանգական դատարանների անդամներ մահմեդականներ նշանակվեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ իր ամուսնի և Միխայիլ ու Ալեքսանդր Միխայլովիչ որդիներանց հետ երէկ վերադարձաւ Ղրիմից Ս. Պետերբուրգ: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, թէ պետական կայքերի մինիստրի կովկաս ճանապարհորդելու նպատակն այն է, որ երկրի մէջ պետական կայքերը անցնելու են մինիստրութեան իրաւասութեան տակ:

ՐԻԲԻՆՍԿ, 1 հոկտեմբերի: Վոլգայի մակերևոյթը 19 վերշոկ բարձր է գրօից: Այստեղ 7° տաքութիւն կայ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 հոկտեմբերի: Սիմինդի հունձը այս տարի կը հասնի մի միլիարդ վեց հարիւր միլիոն բուշէլի, ցորենի հունձը չորս հարիւր և մինչև անգամ չորս հարիւր քսան միլիոն բուշէլից աւելի կը լինի, յատկութիւնը միջակից ստոր է: Վարսակի հունձը հասնում է 500 միլիոնի լաւ յատկութեան, գարիինը 50 միլիոն լաւ յատկութեան: Ծխախոտի հունձը միջակից ստոր է:

ԻՐԿՈՒՏՍԿ, 1 հոկտեմբերի: Այսօր արևի տակ $27^3/_{15}$° տաքութիւն կայ:

ՏԱՇԿԵՆՏ, 1 հոկտեմբերի: Բացի Պուղնավից ափգանցիները գրաւեցին Պուղնավի հարևան վախան երկիրը: Վախանի իշխանը ժողովուրդի մեծ բազմութեան, կայքի և տաւարի հետ թողեց երկիրը, երկիւղ կրելով ափգանցիների յարձակումից:

ԲԱԹՈՒՄ, 1 հոկտեմբերի: Բացուած է բեռների ուղղակի տեղափոխութիւն Մոսկվայի և Բաթումի մէջ Բոգօկանակիի շոգենաւերի միջոցով: Նաւահանգստի աշխատանքների հարցը վճռելու համար հասան այստեղ Պեշչուրով և Գիխաչեվ ծովապետները, իսկ հոկտեմբերի 5-ին կը հասնեն ճանապարհային հաղորդակցութեան և ծովային մինիստրները:

ԿԱՆՏՈՆ, 1 հոկտեմբերի: Կանտոնի վերջին պաշարումը ֆրանսիական զօրքերով վատ է ազդում առևտրի վրա:

ՄԱԴՐԻԴ, 1 հոկտեմբերի: Այսօր վերջնականապէս կազմակերպված է նոր մինիստրութիւն Պոսադի—Գերրերի նախագահութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: Երէկ ներքին գործերի մինիստրութեան եկեղեցու մէջ մաղթանք կատարելուց յետոյ, մինիստրութեան ընակարանի մէջ կայացաւ Բալտեան ուղղափառ միաբանութեան ժողովը: Միաբանութեան հաշուից երևում է, որ Բալտեան երկրի ուղղափառ եկեղեցիները ծաղկած դրութեան մէջ են, իսկ միաբանութեան ռուսական ուսումնարանները կառավարչական օժանդակութեան պէտք ունեն: Էստոնների ուղղափառութիւն ընդունելը աջող է կատարվում: Որովհետև անկարելի է մի անդամից տալ այն գումարը, որ անհրաժեշտ է բանտերի վերանորոգման համար, մօտ 8 միլիոն ռուբլի, նախագծված է ամեն տարի 600,000 ռուբլի ծախսել նոր բանտեր կառուցանելու համար, իրաւունք տալով ներքին գործերի մինիստրին տեղեր ընտրել նոր բանտերի կառուցման համար: Լրագիրները հաղորդում են, որ անտառները ոչնչացնելու մասին նոր կանոնագրութիւնը եկող տարվանից ոյժ կունենայ ամբողջ Ռուսաստանի մէջ, բացի Ֆինլանդիայից, Լեհաստանից, Կովկասից և հեռաւոր նահանգներից՝ Արխանգելսկի, Վոլոգդայի, Օլոնեցկի, Նովգորոդի, Պերմի, Վիատկայի, Կոստրոմայի, Նիժեգորոդի և Կազանի: Զինուորական դատաստանական գլխաւոր վարչութիւնը հերքում է „Новое Время“ լրագրի լուրը զինուորական-քրէական դատաստանավարութեան նախագծի մասին: Մասնաժողովի նիստերը յետաձգված են միայն այնքան ժամանակով, որքան հարկաւոր է նախագիծը տպելու և մասնաժողովի անդամների նրա հետ մանրամասնօրէն ծանօթանալու համար:

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Լրագիրները հաղորդում են Անամի և Ֆրանսիայի մէջ կապված դաշնագրի բնագիրը. Ֆրանսիան հովանաւորում է Անամին և կառավարում է նրա արտաքին գործերը: Բինստուանա նահանգը միացվում է Կոխինխինայի հետ, Ֆրանսիական զօրքերը կը գրաւեն Գուէ ամրոցի եզրերի ամրութիւնները, Տուրան և Սանդայ նաւահանգիստները բացվում են միջազգային առևտրի համար: Նշանաւոր տեղերում մնացող ֆրանսիական տեղապահները հսկում են ներքին կառավարութեան և հարկերի հաւաքման վրա և հարկաւոր դէպքում կարող են փոխել մանդարիններին: Մաքսաները անցնում են Ֆրանսիայի բացառական իրաւասութեան տակ: Ֆրանսիան իր կողմից պաշտպանում է Անամի թագաւորին ներքին և արտաքին թշնամիներից, պարտաւորվում է արտաքսել "սև դրօշակներին„ և մաքսային ու հեռագրական եկամուտների մի մասը տալիս է թագաւորին:

ԼՕՆԴՕՆ, 2 հոկտեմբերի: Պօրտս—Պրէնսում Հայիտի հանրապետութեան մէջ յեղափոխութիւն սկսվեցաւ: Քաղաքը կողոպտված է: Շինութիւնների կէսը աւերված է հրդեհից և ռմբակոծութենից: Բազմաթիւ ժողովուրդ է սպանված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 87 կ., երկրորդ 93 ր. 75 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 93 ր. 37 կ., հինգերորդ 94 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 214 ր. 50 կ., երկրորդ 206 ր. 80 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 37 կ., երկրորդ 91 ր. 50 կ., երրորդ 91 ր. 50 կ., ոսկի 8 ր. 33 կ: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $23^3/_4$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 202 մարկ, Փարիզի վրա $249^1/_2$ ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

միանգամով սրբել Հայաստանը հին նախապարմունքներից կարող չէր, մինչև ժամանակը և կրթութիւնը չը տար նրան մի նոր ձև և կերպարանք (եր. 370—371):

Նոյն հիւանդները տարվում են և Թիֆլիսի մօտակայ եկեղեցիներում, չարաթներով և ամիսներով պահվում են. նոյն ընկաւորները կարելի է տեսնել և Թիֆլիսի մօտակայ ուխտատեղիներում, որոնք ուխտաւորների վրա սարսափ են գործում: Բայց Ֆարհատի նկարագրած «խեղճերը» ու «ընկաւորները», իրաւ որ, յիշեցնում են խորին հեթանոսական ժամանակները, ինչպէս որ պատկերացրած է «Կայծերի» մէջ:

Բայց պ. Հայկունին «Կայծերի» մէջ նկարագրած ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան հանդէսը մանրամասն պատմելուց յետոյ, ասում է, որ այդ բոլորը զրպարտութիւն է, բոլորը հնարել է Բաֆֆին հայոց վանքի սրբութիւնը արատաւորելու համար: Ահա նրա խօսքերը.

«Կռապաշտութեան և կուռքերի կենդրոնը հին ժամանակներում, քրիստոնէութեան և սրբերի կենդրոնը, մինչև մեր օրերը—ինչպէս յայտնի է—Ցարոնի ս. Կարապետն է (???): Այդ վանքը տեսնելու բաղդը ես չեմ ունեցել, բայց բաւական հանապարհորդների գրուածքներ (???) այդ վանքի, նրա ուխտագնացների և հանդէսների մասին, կարդացած եմ: Բացի դրանցից շատ ուխտագնացների հետ մանրամասն խօսակցութիւն ունեցել եմ: Բայց ոչ մէկ ճանապարհորդութիւնից, ոչ էլ մէկ ուխտագնացից ես լսած չեմ „ընկաւոր“, „ընկաւորի“ այդ տեսակ պատմութիւն, այդքան կախարդական գործողութիւնում հայ կրօնաւորի այդքան ջերմ և խորամանկ մասնակցութիւն—այդքան և լոկ շահասիրական դիտմամբ եղած աչքակապութիւն»: —Բայց որովհետև դա մի շատ հետաքրքիր խնդիր է, որովհետև „Կայծերի“ „ընկաւորի“ պատգամներից ես չեմ կարող այդ հետևացնել, որովհետև պ. Բաֆֆին այդ և այդպիսի պատմական պարագաների վրայ շատ թեթև աչքով նայելու սովորութիւն ունի, որովհետև—ինչպէս ես եմ կարծում—արաբական և պարսկական դէրվիշների, վհուկ ու կախարդների գործողութիւնների ազդեցութիւնը պարոնի վրայ բաւական զօրեղ է, ուստի ես խոնարհաբար խնդրում եմ նրանից ցոյց տալ թէ՝ իրան նկարագրութիւնը ինչ բանի վրա է հիմնած: Արդեօք նա ունի իրան ձեռին որ և է գրաւոր կամ բանաւոր յիշատակարան, աւանդութիւն: Արդեօք իրանից զատ, ուրիշներն էլ տեսած են մեր օրերում ս. Աստուածամօր վանքի այդ կռապաշտ վեղարաւորներին: Մի մոռանաք, պ. Բաֆֆի, որ այդ ձեր պատկերով, դուք վեր էք առնում մի ցեխի ու շաղախի ահագին կոտոր և ծեփում քրիստոնէական եկեղեցւոյ պատն ի վեր և Քրիստոսի պաշտօնէի երեսն ի վեր„: —"Մեկնեցէք մեզ, պ. Բաֆֆի, թէ ձեր այդ Ս. Աստուածամօր վանքը իրան միաբանութիւնով ինչից արդեօք այդպիսի խոշոր բացառութիւն է կազմում ամբողջ հայ—քրիստոնեայ աշխարհում:

Այդ տողերը տպվում են „Մեղուի“ № 37 համարում զետեղված կրիտիկայի մէջ, իսկ նրանից առաջ, նոյն կրիտիկայի շարունակութեան մէջ (№ 33) միևնոյն Աստուածածամօր վանքի տօնախմբութեան մասին խօսելով, ահա ինչ է ասում պ. կրիտիկոսը:

"Պ. Բաֆֆիի արդար իրաւունքն է նմանապէս նկարագրել և ուրիշ որ և է ազգային, հասարակական երևոյթ, ժողովրդական սովորութիւն, վարք ու բարք, թէկուզ այդ ամենը իրանից առաջ ուրիշներն էլ արած լինին: Միևնոյն բանի, և միևնոյն ձևով կրկնելը ընթերցող հասարակութեան վրայ կարող է լաւ ազդեցութիւն և օգուտ գործել: (Պ. կրիտիկոսը ծաղրում է): Արդ՝ պ. Բաֆֆին էլ, օգուտ քաղելով իրան այդ արդար իրաւունքից... երկայն բարակ նկարագրում է «Ս. Աստուածածամօր վանքի ուխտաւորներին» (եր. 362—380), թէպէտ և միևնոյն նկարագրութիւնը ունի պ. Աղայեանցը Շամչուղայի ս. Աստուածածնի և Բոլնիսի ս. Գէորգին: Միևնոյն նկարագրութիւնը արած ունի և պ. Սարգսեանը («Շահէնն ի Սիբիր») ս. Կարապետի ուխտաւորներին»:

Լաւ ուշադրութիւն դարձրէք: Այստեղ պ. Հայկունին բոլորովին մերկ, առանց դիմակի, երևան է գալիս իր Սանուսի նման կրկնակի դէմքով,—մէկը ետևից, միւսը առջևից, և ժամանակի ու հանգամանքների համեմատ, նա այս և այն կողմը շուռ է տալիս:

Վերևում բերած առաջին օրինակի մէջ նա ասում էր, թէ ինքը շատ ճանապարհորդների գրուածքներ է կարդացել, շատ ուխտագնացների հետ մանրամասն խօսակցութիւններ է ունեցել, հարց ու փորձ է արել, բայց ոչ ոքից Բաֆֆիի նկարագրութեան նման մի բան չէ լսել: Թէ Բաֆֆին այդ իր պատկերով (ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան հանդէսի մասին) «վեր է առնում մի ցեխի ահագին կոտոր և նրանով ծեփում է թէ քրիստոնէական եկեղեցու պատերը և թէ Քրիստոսի պաշտօնեայի երեսը»: Եւ այդ պատճառով նա խստիւ պահանջում է, որ հեղինակը գրաւոր փաստերով ապացուցանէ իր նկարագրութիւնները յիշեալ վանքի տօնախմբութեան մասին:

Վերևում բերած իր երկրորդ օրինակի մէջ, այդ բոլորը մոռանալով, ասում է նա, որ Բաֆֆիի նկարագրութիւնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ, պ. պ. Աղայեանցի և Սարգսեանցի նկարագրութիւնները՝ ս. Գէորգի, ս. Աստուածածնի և ս. Կարապետի վանքի տօնախմբութիւնների մասին:

Եթէ այդ ճշմարիտ է, այլ ես ինչով է Բաֆֆին հայոց եկեղեցու ու նրա պաշտօնեաների վրա ցեխ քսում: Չէ՞ որ, առաջին ցեխը իրանց վէպերով քսել են պ. պ. Աղայեանցը և Սարգսեանցը:—Եթէ այդ ճշմարիտ է, այլ ես ինչ գրաւոր ապացոյցներ է պահանջում Բաֆֆիից պ. կրիտիկոսը, երբ որ գրաւոր ապացոյցների տեղը ինքը ցոյց է տալիս, ինչպէս են պ. Աղայեանցի և պ. Սարգսեանցի վէպերը:

Ստախօսները յիշողութիւն չունեն:

Եթէ պ. Հայկունին մաքումը պահած լինէր, թէ «Մեղուի» 33 համարում ասել է, որ Բաֆֆիի նկարագրութիւնը պ. պ. Սարգսեանցի և Աղայեանցի նկարագրութիւնների ճիշտ օրինակն է,—այլ ևս «Մեղուի» 37 համարում ինքն իրան չէր հակառակի, ասելով, թէ ինքը շատ գրքեր է կարդացել և Բաֆֆիի նկարագրութեան նման բան չէ տեսել:

Բայց ոչ, ես պ. Հայկունուն այդ աստիճան մոռացկոտ չեմ համարում: Այդ հակասութիւնների մէջ մի աւելի հետաքրքիր պատճառ կայ: Պ. Հայկունին, խարդախ վաճառականների նման, իր կրիտիկայի մէջ երկու տեսակ չափ և երկու տեսակ կշիռ է ընդունում, և որը որտեղ հարկաւոր է, այն է գործ ածում: Այսինքն, նա բոլորովին ներելի է համարում առանձին նպատակների համար առանձին կերպով իր խօսքերը փոփոխել: Մի տեղում նրան հարկաւոր է ցոյց տալ, թէ Բաֆֆին սեպհական, դիտողութեան ընդունակութիւն չունի, որ ինքնուրոյն կերպով նկարագրէ մի որ և իցէ վանքի տօնախմբութիւն, և այդ պատճառով, իր նկարագրութիւնը գողանում է պ. պ. Աղայեանցի և Սարգսեանցի վէպերից: Իսկ մի այլ տեղում նրան հարկաւոր է ընթերցողներին զրգռել Բաֆֆիի դէմ և ցոյց տալ, թէ նա հայոց եկեղեցու թշնամի է, նրա վրա ցեխ է քսում, թէ նա ստեղծում է այնպիսի հրէշաւոր և երևակայական նկարագրութիւններ հայոց վանքերի ու վանականների մասին, որ նրանց սրբութիւնը արատաւորէ, որ նրանց վարկը ցած գցէ: Պարոնի թէ առաջին և թէ երկրորդ վարմունքը պէտք է կրքի և թշնամութեան արդիւնք համարել և ոչ խղճմտաւոր կրիտիկական հետազօտութիւն:

«Կայծերի» մէջ նկարագրված ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան պատկերը ոչ առած է պ. Աղայեանցից և ոչ էլ պ. Սարգսեանից: Նրանց մէջ ոչինչ նմանութիւն չը կայ: Նմանութիւնը այնքան է միայն, որ այստեղ էլ ուխտաւորներ կան, այնտեղ էլ: Բայց Բաֆֆին իր պատկերի մէջ նկարել է այնպիսի հետաքրքիր գծեր, որոնց վրա մեր վիպասաններից ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել: Այդ մասին հետևեալ համարում:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ պատանի ցանկանում է մի ընտանիքում բնակարան և սնունդ ստանալ, որի փոխարէն որոշեալ ժամերում նա կը պարապի տան երեխաների հետ հայոց և ռուսաց լեզուներով, այլ և զանազան առարկաներով: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը: 5—10

ՐԷՅՕԼԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ, Միխայլովսկի փողոցի վրա, տուն Գուրգէնբէկովի № 81, շարունակ ընդունում է աշակերտներին:
7—10 (1)



Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ր., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ր. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ և երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թերփով, աղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, րէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբոմներ, կոնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ:
95—100

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ տեղափոխվեց իր առաջվայ բնակարանից Սերգիեվսկայա փողոցի վրա, Միրզօեվի տանը: Այնտեղ առնում են մանկական գրքեր և ամսագիրներ:
1—4 (1)

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ հետևեալ ԿԱՑԲԵՐԸ Դէյսովիտեէնի Սատասկի Սօվետնիկ ՄԵԼԻՔ—ԱՂԱՄԱԼԵԱՆՑԻ ԵՐԵԻԱՆՈՒՄ: ա) Տունը, որի մէջ ինքն Ադամալեանն է կենում, նրան կից այգիով, բ) տունը, որի մէջ գետեղված է կազնաչէյստվոն, գ) Դալմիի արուարձանում գտնվող այգին:

Հարցնել ԳՆԵՐԻ մասին իրան կալուածատիրոջ:
1—5

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:



Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** տեղը կան ամէն րի համար մեծ **ԳՐԻՉՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱ րիչներ, պենալ, ներ, ծխախոտի ներ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱԹՈՌ- բարկու կախելու տիներ, անոտներ, լուտիւն **ԱՆԳԱՆՈՒԹ:** Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամէն ձևի 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակներ, քարեղ- ԳՐԶԱԿՈԹ, քսակամաններ, ՄԿՐԱՏ- բոցներ, խալիչա- ՄԱՀՃԱԿԱԼ, վեհամար իրեր, ԳՕ- ՄԱՏՈՒՅԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐ- ՆԵՐ, դդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակագլխի, երկաթէ թելերից, ձիու համար: Մակենաջներ: Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:
51—100

ՎԻԷՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ
ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամէն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղլուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցներ, ոսկէ և արծաթէ: Ամէն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն: Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ, գդալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամէն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով: Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (безъ-запроса): Ընդունում է պատուէրներ օտարքաղաքներից ամէն տեսակ ապրանքների:

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова. ՄԱՆԻ

„ԱՂԲԻՒՐ“

Լոյս տեսաւ № 8 և 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուտ հիւանդ (ձշգրիտ անցք) . . . . . Սրինդ
Մշակ . . . . . Բաֆֆի.
Ուրբի յիշատակարանից . . . . . Օր. Միհրուհի.
Տերևների անկումը (բանաստեղծութիւն) . . . . . Ե. Մ.
Փայտաշէն խրճթից՝—Սպիտակ տունը (IX, X և XI գլ.)-փոխադրութիւն . . . . . Ն. Տ.-Աւետիք.
Աշնան տերևներ: (բանաստեղծութիւն) . . . . . Կ. Կ. Մ. Շահ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդապարիկի հնարողները (ռուսերէնից) . . . . . Մ. Փամփուխչ.

ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Հարուստներն ու աղքատները.
Փականագործ պրինց.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Մանկական խաղ. Քարաբօ . . . . . ՄԵԼԻՔ
Հանելուկներ 3 հատ.
Շուտասելուկ.
Ռեբուս.
Ի. Ս. Տուրգէնեվ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Բաֆֆիի քսան և հինգամեայ գործունէութեան առիթով: „Նոր Դար“: „Վարժարան“: Նոր դպրանոց և ամսագիր: „Աղբիւրի“ առաջին պրեմիան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ
ՃԱՆԱՊՍԲՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Րիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ. .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվո.	6—23	6—33	Միխայլօվո.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ. .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվո.	1—50	2— 5	Գօրի. . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվո.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . .	10—24 երեկ.	—

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒ

Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.

Meuse (Մեօզ), որի կապիտանն է Giboin (Ժիբուէն), հասաւ ՓՕԹԻ, չորեքշաբթի սեպտեմբերի 28-ին և նորից ճանապարհ կընկնի **ՓՕԹԻԻՑ** չորեքշաբթի 5-ին հոկտեմբերի, իսկ **ԲԱԹՈՒՄԻՑ** ուրբաթ օր, 7-ին հոկտեմբերի, ուղևորվելով **ՏՐԱՊԻԶՕՆ, Կ. ՊՕԼԻՍ** և **ՄԱՐՍԷԼ**, եթէ եղանակը բարեյաջող լինի:

Դիմել ընկերութեան ագենտներին ՓՕԹԻՈՒՄ պ. Գարանիօնին, ԲԱԹՈՒՄԻ ՄԷՋ պ. Հեքիմեանցին և ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Ըլնօին, Արծրունու գալլերէա № 194.
2—2

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամվարներ: Զեմոգաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.:

Սամվարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուլթաներ և աղալու դորժիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի դդալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի:

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ րէվոլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ: Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը:

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՑ Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**
53—100

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Октября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.